

Վանայ Բերդն . — Le Château de Van.

Ճանայ հնոյ Ճանապարհի, որ խաթարեալ է, և լայնագոյն ևս և ամփիթատրաձև տախտից կամ նստարանաց 'ի ծովն հայելով, որք եթէ ոչ 'ի Շամիրամայ՝ հատեալք են 'ի Գագկայ Արծրունւոյ, զի և սա և հայր սորա Դերենիկ 'ի վերջկոյս Թ դարու՝ արարին բազում և նշանաւոր շինութիւնս 'ի քաղաքին և 'ի բերդին. և թերևս նոցա դաստակերտ լիցի աւերակ եկեղեցին Ս. Յովհաննէս հուպ 'ի ծայր ելից Ճանապարհին, որոյ հիմունք մեծամեծ տաշածոյ և անշաղախ քարամբք կառուցեալ՝ ցուցանեն զգործ հզօրաց և նախնեաց. և մի 'ի վիմացն ունի արձան սեպագիր, և ընդ նովաւ հոսէ աղբիւր որ բղխեալ գայ 'ի ներքուստ տաճարին: Բայց չկայ ինչ կանգուն ոչ յապարանից և 'ի պէսպէս շինածոց Շամիրամայ, և ոչ յԱրծրունեացն ոսկեզօծ արքունեաց, բայց միայն արձանքն սեպագիրք և քարափոր անձաւքն, զի ոչ միայն բնութիւն մաշեաց, այլ ևս առաւել բռնութիւն, մանաւանդ աշխարհաւեր ձեռամբ Լէնկթիմուրայ յամին 1392 ջնջեաց զարտաքին շինուածսն, ոչինչ կարացեալ սանանել ներքնոցն, այսինքն անձաւացն հատելոց 'ի սիրտ քարաբլրին, յորոց տասնիւ չափ երևին, դժուարամուտք և 'ի սեննակս մանունս տրոհեալք. 'ի հասարակի քառակուսիք և տափակք, սակաւք կամարաձևք, ոչ ունելով բնաւ գրուագս կամ քանդակս զարդուց, սակայն և այնպէս հիանալիք վասն միապաղաղ յղկման և պաղպաջանացն. երկուք յանձաւացդ յարևմտակողման սառ բլրին կան, որոց սատրինն կոչի Խուրխուր հնգեքումբ սեննեկօք, Մին մեծ և չորք փոքունք՝ դրամբք կամ անձուկ փողոցօք հաղորդեալք ընդ մեծին, որոյ 32′ է երկայնութեան, 19′ լայն. և 10′1/2 բարձրութեան, և շուրջ յորմն տասն խորշք փորեալք են քառակուսիք բարձր 'ի գետնոյ 3′1/2, զոր ռամիկն բաղանիս Շամիրամայ կոչէ, այլ ոչ թուին այնք աւազանք լուանալեաց. 'ի վերայ դրանն և 'ի կողս արտաքուստ քանդակեալք են բևեռագիր արձանք. 'ի միում 'ի սենեկացն փորեալ է գուբ և 'ի ներքոյ նորա ջրամբար մեծ է ծածկեալ: Հարաւային երեսս քարաբլրին որ 'ի կիսոյն և 'ի վեր գրեաթէ ուղղակերպ տաշեալ ուղղաբերձ հայի 'ի քաղաքն և հարկանէ 'ի նա զճառագայթս արեգական, ունի սանդղաձև աստիճանս անդարձելս, որք թուին Գագկայ ձեռագործք, զի առէ պատմիչն ժամանակակից գործեալ յայնմ կողմանէ “Ճանապարհ աստիճանեալ ներքուստ 'ի վեր„, այլ ոչ արդ մինչ 'ի կատար անձաւին ժամանէ և ոչ հեշտալի ելքն և էջք, որպէս նայն առէ, այլ և անկոխ անգամ. անդ ուր 'ի կուսակալաց Վանայ բանտ յարդարեալ էր, և կոչի Զընտան գափուսի, այլ լքեալ է և այն. Նշանաւոր են յայսմ կողման բևեռագիր արձանքն եռիջեան 60′ բարձր յերկրէ 'ի սեպ ուղիղ դիմի քարաբլրին, որ Քսերքսեայ Պարսից արքայի կարծի յիշատակ. և այլ արձանագիր ութիջեան և 300տողեայ, կարծեցեալ յիշատակ Արգեստեայ ուրումն արքայի, (Արտաշիսի?): Յարևելեան կողման կայ անձաւ մի հնգասենեակ, և այլ անձաւ միակ (23′ երկայն, 14′ լայն, 12′ բարձր) նստարանաձև տախտիւք, յորոց վերոյ երկ-